ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

SIGNS OF THE JUDGEMENT, ONOMASTICA SACRA, THE GENERATIONS FROM ADAM

Վերջերս Ամերիկայի մէջ լոյս տեսաւ Michael E. Stone-ի հայագիտական մէկ նոր աշխատութիւնը, որ կը պարունակէ երեք մանր գրուածքներ. Նշանք Դատաստանի, Եբրայեցի Անուանք, Ծնունդք յԱդամայ։

Գիրքը կը բաղկանայ 278 էջերէ, որուն բաղկացուցիչ մասերն են,

Նախաբան, էջ IX–XVII,

Մաս Ա. — ԺԵ. Նշանք Դատաստանի, էջ 3–57,

Մաս Բ. — Եբրայեցի Անուանք, էջ 61–217, [245,

Մաս Գ. — Ազգ Որդւոյն Նոյի, և Ծնունդք յԱդամայ և Թիւք Նոցա, էջ 221–

ի վերջոյ Ցանկ Եբրայեցի Անուանց, Index to Onomastica, էջ 247–268,

և Ընդհանուր Ցանկ, էջ 269–277։

Հեղինակը նախ կու տայ իւրաքանչիւր բնագրի քննական հրատարակութիւնը, համդիպակաց էջին վրայ անգլերէն թարգմանութեամբ, և ապա մեկնաբանական բացատրութիւններ։ Կ'արժէ նշել որ առաջին բնագիրը ծանօթ է լատիներէն և եբրայերէն լեզուներով ալ, որոնք տեղ գտած են հատորին մէջ, վերջինը հանդերձ անգլերէն թարգմանութեամբ։

Նոյնպէս կ'արժէ յիշել երկրորդ մասին վերջաւորութեան գրուած ցանկը 90 հայերէն ձեռագիրներու, որոնք կը պարունակեն Եբրայական Անուններ։ Հեղինակը կը թելադրէ որ թուագրեալ այդ ցանկը հիմը կազմէ հետագայ հրատարակութիւններու և ուսումնասիրութիւններու։

Հեղինակը քիչ յոգնութիւն կրած չէ կազմելու համար այս հատորը, որուն էջերուն մեծագոյն բաժինը գրաւուած է երկրորդ նիւթով՝ Եբրայեցի Անուանք։ Անուններու և բառերու յաջորդական շարքերը քիչ մը չոր նիւթ ըլլալով պիտի կըրնային ձանձրացնել նուազ խանդավառ ընթերցող մը։ Դր. Ստոնի մանրախոյզ միտքը և մեթոտիկ աշխատանքը յաջողած են յաղթելու բազմապիսի դժուարութեանց, որոնք կը բխին նիւթին բնոյթէն իսկ։

Գրքին ընթերցման ընթացքին հանդիպեցանք դիտողութեան արժանի կարգ մը կէտերու, որոնց մասին մեր նկատողութիւնները կը ներկայացնենք ստորև։ Նախ կու տանք բնագիրն ու հեղինակին կատարած թարգմանութիւնը, և ապա մեր առաջարկած ուղղումները, բնագրին կամ թարգմանութեան վերաբերեալ, ըստ պարագային։

1. — էջ 24–25 տապալին
perish
will be thrown down

2. — էջ 27 մեռելնին
die. They
the dead

3. — էջ 33 (Mark 12:27)
(Joel 3:12)

4. — էջ 57 Joel 4:12
Joel 3:12

digitised by A.R.A.R.@

Part Two ← Onomastica Sacra

5. — էջ 72–73 ուսումն նշանագրաց
teaching of letters
study of letters

6. — » երևելի կամ առաջնորդ
visible or first
notable or leader

7. — էջ 78 բերէզոնն, էջ 82 բարեզոնն
բարեսոնն? עשיר?

8. — էջ 110–111 կարգալ
to set
to read

9. — » սոզոս, unknown word
Սոզոս, [Սօզոս – Սուզոս]
որ կը կարդացուի նոյնը՝ ձախէն աջ և աջէն ձախ

10. — էջ 112–113, 120–121, 128–129, 150–151
ապստամբ
rebellion
rebel

11. — էջ 120–121 Խորհրդական
mysterious
counselor

12. — էջ 122–123 զարհուրեալ
amazed
terrified

13. — էջ 124–125 փայլակն
ray
lightning

14. — » որդի մխիթարութեան
son of mercy
son of consolation

15. — էջ 146–7, 163, 189 բրտոս, դ
earthen (?)
woolly

16. — էջ 200–201 բաղանիք, լուացման տեղիք
— places of —
բաղանիք,
bath, places of washing

17. — » սեաւոր
black
սեւաւոր
dressed in black

18. — » անօթ երաժշտի կամ գործի
instrument of music or work
instrument or implement of a musician

19. — էջ 210–211 զօրաւոր
general
strong

digitised by A.R.A.R.@

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ

ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ(*)

Կենսագրական գիծեր

Ծննդավայրին և ծնողներուն մասին ստոյգ տեղեկութիւններ կը պակսին, բացի անկէ որ իր նախնեաց մականունն էր Ռուսլին։ Յայտնի է թէ ունէր եղբայրներ, քոյրեր և որդիներ։ Յանուանէ կը յիշուի իր մէկ եղբայրը միայն՝ Անտոն։ Ուսած կրնայ ըլլալ Հռոմկլայի մէջ, գրչութեան և մանրանկարչութեան մեծ վարպետներէն Կլայեցի Յովհաննէս Սարկաւագի (1214–1253) *մօտ, որ նմանապէս ուսուցիչը եղած է այլ մանրանկարիչներու։ Իր գործունէութեան շրջանը, համաձայն հաստատուն փաստերու, կ'ընդգրկէ* 1256–1268 *թուականները։ Այդ շրջանէն մեզի ծանօթ են վեց Աւետարաններ և մէկ Մաշտոց։ Թորոս Ռոսլինի վերագրուած են գործեր, որոնք իրմէ չեն և իր մասին կը պատմուին դէպքեր, որոնք ոչ մէկ կապ ունին իր հետ։ Հակառակն ըլլալով ուրիշ գրիչներու և մանրանկարիչներու, յիշատակարաններու մէջ չի խօսուիր իր մասին։ Տեղ մը միայն կ'ըսէ թէ կը կոչուի Թորոս և մականունն է Ռուսլին «ըստ նախնեացն», այսինքն ըստ իր նախահայրերուն։ Չենք գիտեր թէ ուրկէ՞ կու գայ այս օտար անունը։ Ան չի յիշեր իր հօր անունը, ինչպէս սովորութիւն էր այն ատեն։*

Թորոս Ռոսլինի վաւերական կենսագրական գիծերը այսչափ են միայն, ինչպէս կ'ընդգծէ Փրոֆ. Սիրարփի Տէր Ներսէսեան։ Կենսագրութեան մասին տրուած այլ տեղեկութիւններ աւելորդ կը նկատուին մեր կողմէ այստեղ։ Այդ շրջանին եղած են Թորոս անունը կրող ուրիշ անձեր. այսպէս՝ Թորոս Փիլիպոսեան և ուրիշներ, որոնց կենսագրութիւնը շփոթուած է Թորոս Ռոսլինի կենսագրութեան հետ։

Թորոս Ռոսլինի ստեղծագործութիւնը

Թորոս Ռոսլին եղած է պալատական նկարիչ։ Ան իր ժամանակին Կոստանդին Ա. Բարձրբերդցի կաթողիկոսին և Հայոց արքունիքին լայն հովանաւորութիւնը վայելելով, դարձած էր պալատին գլխաւոր նկարիչը և գահաժառանգ Լեւոն Գ.ի սիրականն ու վստահելին։

Թորոս Ռոսլին իր առաջին Աւետարանը գրած և ծաղկած է 1256*ին Հռոմկլայի մէջ, Կոստանդին Ա. կաթողիկոսի համար։ Այս Աւետարանը ծանօթ է «Զէյթունի Աւետարան» անունով։ Անոր նկարները թէև բաղդատաբար քիչ են, բայց անոնց մէջ կան պատկերներ և ձևեր, որոնք չեն երևիր Ռոսլինի ծաղկած միւս Աւետարաններուն մէջ։ Ռոսլին միշտ խուսափած է միօրինակութենէ։ Ճոխ երևակայութեամբ՝ օժտուած այս արուեստագէտը գիտէ միշտ նոր ձևեր ստեղծել, նոյնիսկ երբ միևնոյն տեսարանները կը ներկայացնէ կամ նոյն ընդհանուր սխեմայի խորանները և կիսախորաններու կարա-*

(*) «Սիոն»ի *այս թիւն մէջ հաճոյքով է որ տեղ կու տանք կրօնական գրականութեամբ հետաքրքրուողներուն իր բեղուն գրիչով ծանօթ Հոգշ. Տ. Վաչէ Ծ. Վրդ. Իգնատիոսեանին մէկ նոր ուսումնասիրութեան վերջին գլխուն։ Գործը, որ լոյս պիտի տեսնէ* 1982*ի ընթացքին Ս. Աթոռոյս Տպարանէն, կը կրէ* «Հայ Մանրանկարչութիւնը եւ Թորոս Ռոսլին» *խորագիրը։*

ԽՄԲ.

Ներկայ աշխատութիւնը կը պատկանի Պենսիլվանիոյ Համալսարանին կողմէ հրատարակուող Armenian Texts and Studies *նորահաստատ Մատենաշարին, որուն թիւ 3 հատորն է։ Նոյն Մատենաշարին առաջին թիւն ալ կը պատկանէր* M. E. Stone*ի գրչին, և կը կրէր* The Armenian Version of IV Ezra *խորագիրը։ Այս Մատենաշարը կը հրատարակուի Սարգիս Թէրզեան Հիմնադրամի օժանդակութեամբ, և կը հարստացնէ հայագիտական ուսումնասիրութիւններու շարքը։*

Ն. ԱՐՔ. ԾՈՎԱԿԱՆ

digitised by A.R.A.R.@